

Կոռուպցիայի ընկալման 2022թ. համաթիվը շատ փոքր առաջընթաց է գրանցում կոռուպցիայի դեմ պայքարում՝ աշխարհում ավելի տարածվող բռնության պայմաններում

Կոռուպցիայի մակարդակները մնում են անփոփոխ տասնմեկերորդ տարին անընդմեջ

Բեռլին, 31 հունվարի 2023թ. – Կոռուպցիայի ընկալման 2022թ. համաթիվը (ԿԸՀ), որը հրապարակվեց այսօր Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից, ցույց է տալիս, որ աշխարհի պետությունների մեծ մասը տապալում է կոռուպցիայի դեմ պայքարը. 2017թ.-ից սկսած աշխարհի պետությունների 95 տոկոսը կամ չի գրանցել ոչ մի առաջընթաց կամ այդ առաջընթացը եղել է շատ փոքր:

Գլոբալ խաղաղության համաթիվը ցույց է տալիս, որ աշխարհը շարունակում է ավելի քիչ խաղաղ լինել: Առկա է հստակ կապ բռնության և կոռուպցիայի միջև և խաղաղության համաթիվի ցածր արժեք ունեցող պետությունները ունեն նաև ԿԸՀ շատ ցածր արժեք: Այն իշխանությունները, որոնց գործունեությունը խոչընդոտվում է կոռուպցիայի պատճառով, չունեն կարողություններ՝ պաշտպանելու իրենց քաղաքացիներին և ավելի հավանական է, որ հանրային դժգոհությունն այդ իրավիճակից վերաճի բռնության: Այս արատավոր շրջանն ամենուրեք ազդում է պետությունների վրա՝ **Հարավային Սուդանից** (ԿԸՀ 13 միավոր) մինչև **Բրազիլիա** (ԿԸՀ 38 միավոր):

Ինչպես նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի նախագահ տիկին Դելիա Ֆերեյրա Ռուբիոն. «Կոռուպցիան մեզ շրջապատող աշխարհը դարձրել է ավելի վտանգավոր վայր: Քանի որ իշխանությունները տապալեցին կոռուպցիայի դեմ պայքարում առաջընթաց գրանցելու ջանքերը, նրանք դրանով իսկ նպաստում են բռնության և հակամարտության ներկա աճին: Պետությունների համար միակ ելքը մնում է բոլոր մակարդակներում կոռուպցիան արմատախիլ անելու ծանր աշխատանքը՝ հասնելու նրան, որ իրենց իշխանություններն աշխատեն ողջ ժողովրդի, այլ ոչ թե միայն վերնախավի մի քանիսի համար:»

Աշխարհում կոռուպցիայի ընդհանուր իրավիճակը 2022 թվականին

ԿԸՀ-ի 2022թ. դասակարգումն ընդգրկում է 180 պետություն և տարածք՝ ըստ հանրային ոլորտում 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակով չափված կոռուպցիայի մակարդակների նրանց ընկալման:

ԿԸՀ արժեքի համաշխարհային միջինն արդեն տանմեկերորդ տարին մնում է անփոփոխ և այն հավասար է **43**-ի: Պետությունների երկու երրորդի ԿԸՀ արժեքը 50-ից ցածր է, որը նշանակում է, որ կոռուպցիան այդ պետություններում հանդիսանում է լուրջ հիմնախնդիր:

- **Դանիան** իր ԿԸՀ 90 միավորով գլխավորում է ԿԸՀ 2022թ. դասակարգման աղյուսակը, իսկ **Ֆինլանդիան** ու **Նոր Զելանդիան** իրենց 87-ական միավորներով հաջորդում են նրան: Ուժեղ ժողովրդավարական հաստատությունները և հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ այդ պետություններին մտցնում են նաև աշխարհի ամենախաղաղասեր պետությունների շարքում՝ համաձայն Խաղաղության համաշխարհային համաթվի:
- **Հարավային Սուդանը** (13 միավոր), **Սիրիան** (13 միավոր) և **Սոմալին** (12 միավոր), որոնք բոլորն էլ ներթաշված են երկարատև հակամարտությունների մեջ, շարունակում են մնալ ԿԸՀ դասակարգման աղյուսակի ամենացածր հորիզոնականներում:
- 26 պետությունների ԿԸՀ արժեքները, որոնց թվում են նաև **Քաթարը** (58 միավոր), **Գվատեմալան** (24 միավոր) և **Միացյալ Թագավորությունը** (73 միավոր) 2022թ.-ին հասան իրենց պատմական նվազագույններին:

2017թ.-ի համեմատ 2022թ.-ին ԿԸՀ իրենց արժեքների զգալի նահանջ են արձանագրել 10 պետություն:

- Չգալի նահանջ արձանագրած երկրներն են **Լյուքսեմբուրգը** (77 միավոր), **Կանադան** (74 միավոր), **Միացյալ Թագավորությունը** (73 միավոր), **Ավստրիան** (71 միավոր), **Մալայզիան** (47 միավոր), **Մոնղոլիան** (33 միավոր), **Պակիստանը** (27 միավոր), **Հոնդուրասը** (23 միավոր), **Նիկարագուան** (19 միավոր) և **Հայիթին** (17 միավոր):
- Նույն ժամանակամիջոցում զգալի առաջընթաց են արձանագրել 8 պետություններ: Դրանք են **Իռլանդիան** (77 միավոր), **Հարավային Կորեան** (63 միավոր), **Հայաստանը** (46 միավոր), **Վիետնամը** (42 միավոր), **Մալդիվները** (40

միավոր), **Սուղովան** (39 միավոր), **Անգոլան** (33 միավոր) և **Ուզբեկստանը** (31 միավոր):

Յուրաքանչյուր պետության ԿԸՀ անհատական միավորի և ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունների, ինչպես նաև յուրաքանչյուր տարածաշրջանի վերլուծության վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս **2022 CPI page** հղումը:

Կոռուպցիա, հակամարտություն և անվտանգություն

Կոռուպցիան, հակամարտությունը և անվտանգությունը խորապես փոխկապակցված են: Հանրային միջոցների չարաշահումը, թալանը կամ յուրացումը կարող են միջոցներից զրկել հենց այն կառույցներին, որոնք պատասխանատու են քաղաքացիների պաշտպանության, օրենքի գերակայության ապահովման և այն ռեսուրսների խաղաղ գոյության համար, որոնք անհրաժեշտ են այդ կառույցներին իրենց պարտականությունները կատարելու համար: Հանցավոր և ահաբեկչական խմբավորումներին հաճախ օգնում են նրանց մեղսակից կոռումպացված պետական պաշտոնյաները, իրավապահ մարմինների աշխատակիցները, դատավորները և քաղաքական գործիչները, որը թույլ է տալիս այդ խմբավորումներին բարգավաճել և անպատիժ գործել:

- 2022թ. փետրվարին սկսված Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինա հանդիսանում է խիստ հիշեցում առ այն, որ կոռուպցիան և իշխանությունների կողմից հաշվետվողականության բացակայությունը ծնում են սպառնալիքներ միջազգային խաղաղությանը և անվտանգությանը: **Ռուսաստանի** (ԿԸՀ 2022-ի միավորը 28) կլեպտոկրատները դիզել են մեծ հարստություն՝ խոստանալով իրենց հավատարմությունը նախագահ Պուտինին և դրա դիմաց ստանալով պետությունից շահավետ պայմանագրեր և իրենց տնտեսական շահերի պաշտպանություն: Պուտինի իշխանության վրա զսպումների կատարյալ բացակայությունը թույլ տվեց նրան անպատիժ կերպով հետամուտ լինելու իր աշխարհաքաղաքական նկրտումներին: Այս ներխուժումն ապակայունացրեց եվրոպական աշխարհամասը՝ սպառնալով ժողովրդավարությանը և սպանելով տասնյակ հազարավոր մարդկանց:
- Տասնամյակներ տևած հակամարտությունից հետո **Հարավային Սուդանը** (ԿԸՀ 2022-ի միավորը 13) այժմ գտնվում է հումանիտար խոր ճգնաժամի մեջ՝ որի բնակչության կեսից ավելին դիմագրավում է պարենային սուր ճգնաժամ, որն էլ ավելի է խորանում կոռուպցիայի պատճառով: Սենթի ոչ կառավարական հետաքննողական և հանրային քաղաքականության ուսումնասիրությունների կազմակերպության անցյալ տարվա զեկույցը բացահայտել է երկրի նախագահի

ընտանիքի հետ կապեր ունեցող կոռումպացված քաղաքական գործիչների ցանցի կողմից ստեղծված զանգվածային խարդախության մի սխեմա, որը գրպանում էր երկրին ցույց տրվող պարենային, վառելիքային և դեղամիջոցների օգնությունը:

- Կոռուպցիայի, ավտորիտարիզմի և տնտեսական անկման համադրությունն ապացուցեց իր առանձնակի խոցելիությունը **Բրազիլիայում** (ԿԸՀ 2022-ի միավորը 38), որտեղ նախագահ Ժաիր Բոլսոնարուի նախագահության ժամկետը նշանավորվեց հակակոռուպցիոն համակարգերի ապամոնտաժմամբ, քաղաքական դաշնակիցներին բարեհաճ վերաբերմունք ցույց տալու և երկրի օրենսդիր մարմնում քաղաքական աջակցությունը մեծացնելու նպատակով կոռուպցիոն սխեմաների կիրառմամբ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության դեմ ապատեղեկատվությամբ և հարձակումներով: Այս տարվա հունվարին, Բոլսոնարուի կողմնակիցները, նրա՝ նախագահական ընտրություններում պարտվելուց և չվերընտրվելուց հետո, ձեռնարկեցին դաժան հարձակում երկրի խորհրդարանի, գերագույն դատարանի և նախագահական նստավայրի շենքերի վրա՝ ավերածության մատնելով դրանք և սպառնալով ոստիկանների և լրագրողների կյանքին : Այդ ամենը նպատակ ուներ խափանելու իշխանության խաղաղ փոխանցումը նոր ընտրված նախագահ Լուիս Ինասիու դա Սիլվային:
- Կոռուպցիայից դժգոհությունները նպաստեցին ութ տարի առաջ քաղաքացիական պատերազմի բռնկմանը **Եմենում** (ԿԸՀ 2022-ի միավորը 16): Այժմ պետությունը փլուզվել է՝ թողնելով նրա բնակչության երկու երրորդին առանց բավարար սնունդի: Դա աշխարհի վատագույն հումանիտար ճգնաժամերից մեկն է:
- Նույնիսկ այն պետություններում, որոնք ունեն համեմատաբար ուժեղ հակակոռուպցիոն համակարգեր, պաշտպանության ոլորտը հաճախ մնում է գաղտնի՝ դրանով իսկ դուռ բացելով անհարկի ազդեցության և կոռուպցիայի այլ դրսևորումների համար: Համաձայն [Government Defence Integrity Index](#) -ի գնահատված 85 երկրներից միայն 9-ում է առկա է կոռուպցիայի ցածր կամ շատ ցածր ռիսկ: Սա առանձնապես մտահոգիչ է, քանի որ շատ պետություններ պատրաստվում են ավելացնել իրենց ռազմական ծախսերն՝ ի պատասխան առաջացող սպառնալիքների և Ուկրաինայում ընթացող պատերազմի: Օրինակ, **Գերմանիայի** (ԿԸՀ 2022-ի միավորը 79) կառավարությունը ստեղծել է 100 միլիարդ եվրոյի հիմնադրամ՝ վերազինելու համար իր բանակը, բայց այնտեղ գնումների պարզեցված ընթացակարգերը ստեղծում են կոռուպցիոն էական ռիսկեր: Միևնույն ժամանակ, ազգային անվտանգության նոր ռազմավարությունը, որը ներկայումս քննարկվում է կառավարության կողմից, կարող է ուժեղացնել բարեվարքության և թափանցիկության մեխանիզմները, եթե այդ ռազմավարությունն ընդունվի:

Թրանսփարենսի Ինթերնեշնլը կոչ է անում կառավարություններին առաջնահերթ դարձնել հակակոռուպցիոն պարտավորությունները, ուժեղացնել հակակշիռները, պաշտպանել տեղեկատվության իրավունքը և սահմանափակել մասնավոր շահերի ազդեցությունը՝ աշխարհը կոռուպցիայից և դրանից առաջ եկող բռնությունից վերջնականապես ազատելու համար:

Ինչպես նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն Դանիել Էրիկսոնը. «Լավ լուրն այն է, որ առաջնորդները կարող են միաժամանակ պայքարել կոռուպցիայի դեմ և նպաստել խաղաղությանը: Կառավարությունները պետք է ավելի բաց լինեն, ներառելու որոշումների կայացման մեջ հանրությանը, սկսած ակտիվիստներից և գործարարներից մինչև մարզինալացված խմբերին և երիտասարդներին: Ժողովրդավարական հասարակություններում մարդիկ կարող են բարձրացնել իրենց ձայները՝ արմատախիլ անելու համար կոռուպցիան և պահանջելու ավելի ապահով աշխարհ բոլորիս համար:»

Ծանոթագրություն

- Մեդիա էջը (տե՛ս <https://www.transparency.org/en/cpi/2022/media-kit>) ներառում է ԿԸՀ 2022-ի զեկույցը հինգ լեզուներով, ինչպես նաև տվյալների ամբողջական բազան, մեթոդաբանությունը և լրացուցիչ վերլուծություն ըստ վեց տարածաշրջանների, որում առանձնացվել են այն երկրները, որոնք այս անգամ համարվել են կարևոր, ներառյալ **Բրազիլիան** (ԿԸՀ 38 միավոր), **Շրի Լանկան** (ԿԸՀ 36 միավոր) և **Միացյալ Թագավորությունը** (ԿԸՀ 73 միավոր):

Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին

Սկսած 1995թ. իր առաջին հրապարակումից Կոռուպցիայի ընկալման համաթիվը, դարձավ հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ համաշխարհային առաջատար ցուցիչը: 2021 թվականի համաթիվը գնահատել է աշխարհի 180 երկրները և տարածքները՝ ելնելով հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումից և օգտագործելով տվյալներ 13 արտաքին աղբյուրներից, որոնց թվում Չամաշխարհային Բանկը, Չամաշխարհային տնտեսական ֆորումը, ռիսկեր գնահատող և խորհրդատվական մասնավոր ընկերությունները, հետազոտական կենտրոնները և այլն: Գնահատականներն արտացոլում են փորձագետների և գործարարների ընկալումները:

ԿԸՀ-ի հաշվարկման գործընթացը կանոնավոր կերպով վերանայվում է (վերջին անգամ՝ 2017 թվականին Եվրոպական Հանձնաժողովի Համատեղ հետազոտական կենտրոնի կողմից)՝ համոզվելու համար, որ այն ունի հնարավորինս կուռ և համահունչ ներքին տրամաբանություն: 2012 թվականից այս կողմ ԿԸՀ յուրաքանչյուր տարվա

գնահատականները համեմատելի են յուրաքանչյուր այլ տարվա գնահատականների հետ: Ավելի շատ տեղեկատվության համար՝ տե՛ս *ԿԸՀ այբուբենը. ինչպես է հաշվարկվում Կոռուպցիայի ընկալման համաթիվը* հոդվածը (<https://www.transparency.org/en/news/how-cpi-scores-are-calculated>):